ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՄԱՍՆԱՏԻՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՐՆԱՀԱՐԿՆ ԸՍՏ 1870 Թ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Ս. Խ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մանրամասնորեն քննելով Անդրկովկասի «մահմեդական բարձր դասի, նաև հայ մելիքների հողերի վրա բնակվող պետական շինականների հողային կարգավորման մասին» 1870 թ. մայիսի 14-ի Կանոնադրության՝ գյուղացիների պարտավորություններին վերաբերող հոդվածները, հետազոտողները ցույց են տվել, որ դրանք բնույթով (այսինքն՝ ֆեոդալական հողային ռենտայի հայտնի ձևերի պահպանման իմաստով) փաստորեն նույնական էին 1846 թ. դեկտեմբերի 6-ի ցարական ռեսկրիպտի ոգով կազմված 1847—1851 թթ. Կանոնադրությունների սկզբունքներին, այլ կերպ ասած՝ ռեֆորմի բովանդակություն չունեին։

Սակայն, անցնելով գյուղացիների պարտավորությունների կոնկրետ չափերին վերաբերող այդ օրենքի պահանջներին, հետազոտողները դրանք ինչպես հարկն է չեն համեմատել այլ առիթներով իրենց իսկ քննած 1847—1851 թթ. Կանոնադրությունների համապատասխան հոդվածների հետ, որոնք սահմանում էին «շինական պարտույթներ»՝ Անդրկովկասի տարբեր նահանգներում։ Այդ պատճառով դժվար է նրանց անվերապահ պնդումներից հստակ ու որոշակի պատկերացում ստանալ այն մասին, թե իսկապե՞ս կային էական տարբերություններ Երևանի և հարևան նահանգների մասնատիրական գյուղացիների ընդհանուր հարկաչափերի միջև։

1870 թ. մայիսի 14-ի Կանոնադրության[1] 72-րդ հոդվածը հօգուտ հողատերերի սահմանում էր բնապարտույթ (մալջահաթ կամ բահրա) և, բացի այդ, դրամապարտույթ՝ բանվորական օրերի փոխարեն «այն կալվածներում, ուր մինչ այդ հողատերերին բանող ձեռքեր են տրամադրված եղել»։ 76-րդ հոդվածով մալջահաթը Բաքվի, Գանձակի նահանգներում և Թիֆլիսի նահանգի մի մասում կազմում էր գյուղացու բերքի 3/30-ը, իսկ Երևանի նահանգի բեկամուլքադարական կալվածքներում՝ 4/30-ը։ Այստեղից հետազոտողները եզրակացրել են, որ Երևանի նահանգում գյուղացիների «նատուրալ պարհակը կալվածատերերին բարձր եղավ» (Վ. Ռշտունի) կամ «բարձր պիտի մնար» (Խ. Ավդալբեգյան) մյուս նահանգների բնապարտույթից 1/30-ով կամ 33%-ով ու դրա հետ մեկտեղ «հայկական և ադրբեջանական մարզերի շինականները» պարտավորված էին մնում դրամավճարի վերածված աշխատանքային պարհակով[2]։

---

[1] «Полное собрание законов Российской империи», т. XLV, № 48357, стр. 630—646

[2] Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Բ, Երևան, 1968, էջ 72, Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 262։

Եթե, հետևելով այս հետազոտողներին, չանենք անհրաժեշտ վերապահություն, ապա կստացվի որ հարկաչափի ոչ այնքան փոքր այդ տարբերությամբ Երևանի նահանգի «բարձր դասի» համար ստեղծված էր արտոնյալ վիճակ՝ մյուս նահանգների կալվածատիրության նկատմամբ։ Այդ դեպքում անհասկանալի կմնա, թե հողային հարաբերությունների կարգավորման կարևոր խնդրում ի՞նչը կարող էր կառավարությանը մղել առանձին բարյացակամության՝ Երևանի նահանգի հողատերերի հանդեպ։

Մեր կարծիքով, սակայն, կանոնադրական ձևակերպումը չէր օրինականացնում այդքան որոշակի տարբերություն։ Այդպիսին դժվար է գտնել նաև 1847—1851 թթ. Կանոնադրություններում, եթե նկատի ունենանք, որ ռենտայի երեք հայտնի ձևերով կատարվող վճարումները, նայած պայմաններին, ընդհանուր հարկի մեջ հանդես էին գալիս տարբեր համամասնություններով։

1870 թ. Կանոնադրության 72-րդ և 76-րդ հոդվածներում մալջահաթ-բահրան և դրամապարտությը որպես առանձին հարկատեսակներ ձևակերպված են ոչ թե բոլորովին ինքնուրույն, զուգահեռ սահմանումներով, ինչպես թվում է առաջին հայացքից, այլ պայմանավորում են միմյանց։ Ակնհայտ է դրամապարտության առթիվ այնտեղ արված վերապահումը՝ բանվորական օրերի փոխարեն «այն կալվածներում, ուր մինչ այդ հողատերերին բանող ձեռքեր են տրամադրված եղել»։ Հարց է առաջանում. իսկ ինչո՞վ էր հատուցվում այդ պարտավորությունը այն կալվածներում, որոնց տերերին մինչ այդ բանող ձեռքեր տրամադրված չեն եղել՝ հենց նույն Երևանի նահանգում, ուր, ինչպես հայտնի է, ոչ բոլոր հողատերերն էին զբաղվում արտադրությամբ ու բանող ձեռքի կարիք ունեին։ Մի՞թե նրանց կալվածքներում բնակվող գյուղացիներն ազատ էին ինչ-որ հարկատեսակից և նրանց վճարած ռենտայի գումարը ինչ-որ չափով փոքր էր մյուսների վճարածից։ Նույնիսկ գրական ենթադրությունն այդ մասին կհանգեցներ քննվող ժամանակաշրջանի իրականության ոչ ճիշտ ընկալման։

Տեսականորեն նույնպես սխալ կլիներ կարծել, թե առանձին կալվածքներում գյուղացիների հարկային վճարումներն ինչ-որ չափով կարող էին պակաս մնալ տվյալ նահանգի նույնատիպ կալվածքների համար սահմանված հողատուրքի ընդհանուր գումարի համեմատությամբ, եթե հողատերերն առաջիններում չցանկանային անմիջապես արտադրությամբ զբաղվել և բանվորական ձեռքի կարիք չունենային։

1870 թ. Կանոնադրության՝ շինական պարտությունին վերաբերող կետերը մեկնաբանելիս հետազոտողների մոտ ակներև անորոշության տեղիք է տվել նատուրալ պարհակի 1/30-րդ «հավելումը», որ շնորհված էր հողատերերին դեռևս գեներալ Պասկևիչի կողմից 1829 թ.։ Դրա էության մասին ստորև համառոտակի կխոսենք։ Իսկ այժմ նշենք, որ հիշյալ Կանոնադրություններով մալջահաթի կամ բահրայի վրա հաստատված այդ «հավելումը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ ընդունված համարժեքը միևնույն բանվորական օրերի պարհակի, որն այս շրջանի պաշտոնական գրություններից հայտնի է նաև «շինականների անձնական ծառայություններ» անունով։ Երևանի նահանգում այն վճարվում էր բնատուրքով (փոքր բացառություններով)՝ միացած բահրային (3/30+1/30=4/30), որքանով որ հողատերերի մեծ մասը այստեղ սեփական տնտեսություն չէր վարում և բանվորական ձեռքի կարիք չուներ։ Վերո-

հիշյալ մյուս նահանգներում այն գանձվում էր մալջահաթից առանձին, որպես բանվորական օրերի պարհակ և մեզ հետաքրքրող շրջանում վերածված էր դրամապարտության։ Սրան իր հերթին համամասնորեն կարող էր փոխարինել բնապարտությունը՝ միանալով բահրային, ինչպես Երևանի նահանգում։ Բայց այդ դեպքում մալջահաթը չէր կարող ավելին լինել գյուղացու տարեկան բերքի 1/8-ից՝ Բաքվի և Գանձակի նահանգներում և 1/9-ից՝ Ղազախի գավառում (հոդված 78)։ Այլ կերպ ասած, դրամապարտության վերածված բանվորական օրերի պարհակը հավասարեցվում էր բնատուրքի 1/30-ին, որի հավելումով այստեղի բահրան շատ աննշան չափով էր տարբերվելու Երևանի նահանգի բահրայից։ Այսպիսի եզրակացության համար փաստական ապացույց կարող են դիտվել նաև Երևանի նահանգի այն թիուլա-մուլքադարական կալվածքներին վերաբերող տվյալները, որոնց տերերը բնավճարի հետ միասին օգտվում էին աշխատանքային պարհակից։ Իհարկե, տվյալ դեպքում նկատի ունենք խնդրի իրավական կողմը՝ վերանալով հողատերերի ապօրինի գանձումների ու չարաշահումների հայտնի փաստից, որն այդ շրջանի պաշտոնական գրություններում կամ մեղմացվում, կամ էլ, ավելի հաճախ, մեկնաբանվում էր ի վնաս գյուղացիների։

Էջմիածնի վանքը, որպես թիուլատեր-մուլքադար, Վաղարշապատ, Օշական, Մաստարա և Եղվարդ գյուղերի հողային եկամուտներից ստանում էր բահրա-մալջահաթ բերքի 3/30-ի և թիուլապարտություն՝ նույնպես 3/30-ի չափով, այգիների յուրաքանչյուր սոմարից՝ 1 ռ. 20 կ., բոստանների սոմարից՝ 80 կ. և դրամահարկ՝ ծխից 4 ռ. 25 կ.։ Այս բոլորից բացի նա օգտվում էր նաև շինականների անձնական ծառայություններից։ Հարկերի այս չափերով էլ 1870—1880-ական թվականներին նախատեսվում էր «կարգավորել» նրա և գյուղացիների հարաբերությունները։

Համադրելով 1870 թ. Կանոնագրության և եկեղեցու կալվածքների վրա այն տարածելու մասին՝ Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության շինական գործերի կարգավորման գրասենյակի կազմած նախագծի (1875 թ. սեպտեմբեր) կետերը, էջմիածնի սինոդն ու նրա գործերի հավատարմատար Վ. Եղիազարյանցը գրանցում հակասություն տեսան այն իմաստով, որ վանքին տրվող բահրան ու թիուլային բնապարտությունը միասին կազմելու էին բերքի 6/30-ը, մինչդեռ 1870 թ. Կանոնադրության 76-րդ կետով միայն մալջահաթ-բահրան սահմանվում էր բերքի 4/30-ի չափով։ Պաշտոնական կողմի հետ վեճ ծավալվեց, մեզ արդեն ծանոթ, բերքի 1/30-ի շուրջ։ Էջմիածինը փորձում էր հավաստիացնել, որ այն որպես թիուլի և ոչ թե մուլքի մի մաս վանքը կամովին ղիջել է գյուղացիներին դեռևս Եփրեմ կաթողիկոսի օրոք՝ «նրանց վիճակը թեթևացնելու» նպատակով։ Ուրեմն, վանքի մուլքը բերքի 4/30 մասով անձեռնմխելի է, իսկ թիուլը մինչև այժմ 1/30-ով պակաս է գանձվել՝ նկատի ունենալով գյուղացիների անձնական ծառայությունները, որոնց նկատմամբ նույնպես վանքը լիակատար իրավունք ունի։ «Վանքն էջմիածնի,— գրում էր Վ. Եղիազարյանցը,— ցանկալով թեթևացուցանել զդրութիւն շինականաց, բնակելոց ի կալուածս իւր... վասն անձնական ծառայութեանց եթող յօգուտ նոցա գեռ ի ժամանակի պարսից կառավարութեան 1/30 մասն ի 3/30 մասանց բահրայէ այսինքն ի թիւէ. զայս 1/30 մասն կազմողն ծրագրոյ զեղչեաց

առանց ամենալն հիման ի 4/30 մասն է մուլքի, որ չունի առնչութիւն ինչ ընդ թիւլի»[3]։

Որքանով որ այժմ թիուլապարտուլթի փոխհատուցման հարցն էր դրված, էջմիածնի սինոդը գտնում էր, որ այդ պակասը պետք է վերականգնվի, այսպես, վանքի եկամուտը 6/30-ով հաշվելու դեպքում, հարկամասի 1/30-ը նրանից անցնելու է արքունիքին։ «Չպետք է թույլ տալ,— գրում էր կաթողիկոսը ներքին գործերի մինիստրին 1886 թ. օգոստոսի 16-ին,— որ Կովկասում գյուղացիական ռեֆորմի գործում կառավարությունը նպատակամղվի իր նյութական միջոցների հարցը լուծել մասնավոր մարդկանց և հաստատությունների հաշվին»[4]։

Իր պահանջը հիմնավորելու համար էջմիածնի սինոդը նախ մատնանշում էր վանքին Երևանի վերջին սարդարի շնորհած թիուլային բացառիկ իրավունքը, որով նա, մուլքից անկախ, ստանում էր ոչ միայն չորս գյուղերի պետական հարկաբաժինը (3/30) և ծխահարկը, այլև բանվորական օրերի պարհակը, որը թիուլային մյուս գյուղերում մնում էր սարդարին։ Ապա կաթողիկոսը և վանքի հավատարմատարը վկայակոչում էին մի մասնավոր դեպք Նոր Բայազետի գավառի Բջնի գյուղի մուլքադար-թիուլատեր Արսեն սուլթան Գեղամովի և գյուղացիների հարաբերություններից՝ կապված նույն այդ բնատուրքի 1/30 հավելման հետ։ Իսկ ի՞նչ էր տեղի ունեցել։

Բջնեցիները, որոնք պարտավորված էին բնատուրքով և աշխատանքային պարհակով, 1849 թ. բողոքել էին Գեղամովի դեմ՝ հարկաչափերը ապօրինի ավելացնելու առթիվ[5]։ Ուսումնասիրելով գործը, Երևանի նահանգական վարչությունը 1850 թ. հոկտեմբերին Գեղամովի կողմից «հողարդյունքի 7/30-ի (4/30 մուլքի և 3/30 թիուլի— Ս. Ա.), ծխահարկի 2 ռ. 50 կոպ., հարդի, ծղոտի, առվույտի, յուղի և պանրի, ինչպես նաև արոտատեղի դիմաց գանձումները» համարել էր ճիշտ և «քանակով ոչ ավելի, քան սահմանված են սովորույթով ու գանձվում են նման կալվածքներում մյուս թիուլատերերի կողմից», իսկ շինականների աշխատանքային պարհակների (փայտ կրելու, հողը վարելու, բերքը հավաքելու, հողատիրոջ տարբեր պետքերին բանվորներ, ծառաներ ու ձիեր տրամադրելու) վերաբերյալ վարչությունը զեկուցել էր նահանգապետին, որ «թիուլատերերի ու շինականների ներկայիս հարաբերությունների անորոշության պայմաններում... հիմք չկա հաստատելու, հավասարապես և ժխտելու թիուլատիրոջ՝ նման գանձումների իրավունքը»[6] մինչև շինականների և հողատերերի հարաբերությունների մասին նոր Կանոնադրության հաստատումը (որը տեղի ունեցավ 1851 թ. հունիսի 8-ին)։ Բայց մինչ այդ արդեն «Գեղամովը, համոզվելով նահանգապետի խրատներից» համաձայնվել էր բնատուրքի 7/30-ի փոխարեն գյուղացիներից վերցնել 6/30-ը՝ «զիջելով» նրանց 1/30-ը, ինչը և պաշտոնապես հաստատվեց վարչության խորհրդի 1851 թ. մարտի 1-ի որոշմամբ։ Այդ որոշման վրա փոխարքան մակագրել էր.

---

3 ՀՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (ԿՊՊԱ), ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 61բ.

4 Նույն տեղում, թ. 141բ, 142։

5 «Крестьянское движение в Армении в XIX веке», сост. проф. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948, стр. 46—76, 92—110 (док. 17—25, 41—53).

6 Նույն տեղում, էջ 73—74 (փաստ. 24)։

«Համաձայն եմ, բայց պայմանով, որ մինչև թիուլային իրավունքների հարցի ընդհանուր լուծումը, Գեղամովի առաջարկած թեթևացումները (խոսքը բնահարկի 1/30-ը «զիջելու» մասին է— Ս. Ա.) արդեն որպես հիմք ընդունվեն այն պարտավորությունների համար, որոնք նա իրավունք ունի պահանջելու»[7]։

Միամտություն կլիներ կարծել, թե այդ «թեթևացումը» կալվածատիրոջ «սեփական բարի կամեցողության» արդյունքն էր, ինչպես այն բնութագրված է վարչության խորհրդի որոշման մեջ։ Դա գյուղացիների աճող դժգոհության և անհնազանդության պայմաններում նույն այդ վարչության ու նրա աստիճանավորների թողտվությամբ կատարվող ապօրինի գանձումները կարճելու ամենահարմար հիմնավորումն էր։ Մեր կարծիքով՝ իրավացի էր Մ. Կուչաևը հետագայում այդ փաստը մեկնաբանելով ոչ թե որպես բնատուրքի 1/30-ի անհատույց զիջում Գեղամովի կողմից, այլ որպես վերադարձ օրինական ճանաչված գանձումներին՝ աշխատանքային պարհակի ստացման իրավունքը պահպանելու նպատակով[8]։ Որ դա իսկապես այդպես էր, երևում է նաև այն փաստից, որ 1871 թ. Երևանի նահանգապետ Կարմալինի առաջարկով փոխարքան «սխալ համարելով նահանգում գործող թիուլային իրավունքից որևէ բացառության թույլատրումը, հրամայեց Գեղամովին վերադարձնել նրա զիջած բահրայի 1/30-ը և Բշնիի շինականներին ազատել թիուլային մյուս կալվածներում գոյություն չունեցող տարբեր տուրքերից ու անձնական ծառայություններից»[9]։ Հարցի նման լուծումից դժգոհ՝ կալվածատերը հավանաբար հենց այդ նկատի ուներ, երբ տարիներ հետո (1875 թ.) մեկ այլ առիթով, վիրավորված գանգատավորի տոնով, գրում էր, թե «այժմ իմ գյուղերը կառավարելու գործում դադարել է իմ ազդեցությունը՝ շինականների հետ հարաբերությունների փոփոխման և բարի մարդկանց շնորհիվ, որոնք օգտվելով նախկին գեներալ-նահանգապետ Կարմալինի ուշադրությունից ու բարեհաճությունից, բնակիչներին սխալ բացատրեցին շինական կանոնադրությունը»[10]։

Ուշագրավ է սակայն, որ էջմիածին-կալվածատերն ու նրա հավատարմատարը ճիշտ էին համարում փոխարքայի այդ կարգադրությունը։ Բայց բերելով Գեղամովի օրինակը, նրանք այնուհետև հավանաբար զգացին, որ դա անհաջող փաստարկ էր և հարցի լուծման համար պահանջեցին էական վերապահում, այն է՝ շինականների թիուլապարտությունն գումարելով բնատուրքի «զիջված» 1/30-ը, միաժամանակ պահպանել նրանց ծառայություններից օգտվելու վանքի իրավունքը։ Ինչո՞ւ, որովհետև Գեղամովի կողմից այդ երկուսի զուգահեռ գանձումը ապօրինի էր, իսկ էջմիածինը ունի իրավական հիմք դեռ սարդարի ժամանակներից։ «Բոլոր զանազանութիւնն յայսոսիկ երկուս դէպս,— գրում էր Վ. Եղիազարյանցը,— բովանդակի յայնում, զի Գեղամեանց զեզչեաց զ1/30 մասն բահրայի որպէս զի պահեսցէ ինքեան անկանոնաբար ստանալի զիրաւունս հարկաց, այնինչ իբրև վանքն էջմիածնի թույլատրեաց

---

[7] Նույն տեղում, էջ 76 (փաստ. 76)։

[8] ՀՍՍՀ ԵՊՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 151բ—152։ Երբ քննվում էր եկեղեցու կալվածքների վրա 1870 թ. Կանոնադրության տարածման հարցը հայտնի պաշտոնական պատմարան-տնտեսագետ Մ. Կուչաևը Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության շինական գործերի կարգավորման գրասենյակի պետն էր, Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչի խորհրդի ա՛.գամը ներքին գործերի մինիստրությունից։

[9] Նույն տեղում։

[10] «Крестьянское движение в Армении в XIX веке», стр. 238 (док. 185).

շինականաց զհամանման Թեթևութիւն առեալ ի նկատի զանձնական ծառայութիւնս նոցա, որովք նա շահիւր ի նոցանէ և շահի և այժմ ըստ իրաւանց»[11].

Զունենալով այդ իրավունքը վավերացնող որևէ փաստ, կովկասյան իշխանությունները մերժեցին էջմիածնին՝ առաջարկելով ընտրություն կատարել բնատուրքի 1/30-ի և յուրաքանչյուր շինական ծխի անձնական ծառայության դիմաց նշանակված 75 ռ. միջև։

Եթե ընդունենք, որ աշխատանքային պարհակի հավասար զանձման պայմաններում 1870 թ. Կանոնադրությամբ Երևանի նահանգի բահրան 33%-ով բարձր էր հարևան նահանգների մալջահաթից, անբացատրելի կմնա, թե ինչո՞ւ էր հակառակ բացառություն արվում էջմիածնի վանքի և կալվածատեր Գեղամովի նկատմամբ՝ հայրենի նահանգում։

Քննարկելով 1870 թ. Կանոնադրության 72 և 76-րդ կետերը, Վ. Ռշտունին գրել է. «Հիշենք, որ Երևանի նահանգի նատուրալ պարհակների չափը (4/30) կապ չուներ տեղական սովորույթի հետ, դրա 1/30 մասը ավելացված էր գեներալ Պասկևիչի կողմից, այդ հավելումը սրբագործվեց 1847—1851 թվականների կիսաճորտատիրական կանոնադրություններով և վերջնականապես պարտագրվեց Հայաստանի գյուղացիներին «ազատագրության» կապակցությամբ, որով նրանց նատուրալ պարհակները կալվածատերերին 1/10-ով (պետք է լինի 1/30-ով—Ս. Ա.) ավելի եղան հարևան նահանգների տուրքերի համեմատությամբ»[12]։

Եթե խոսքը գյուղացու շահագործման աստիճանի մասին է, ապա 1/30 հարկաբաժինը նրա համար նոր հավելում չէր։ Դեռ սարդարի ժամանակ նա պարտավորված էր հարկի այդ մասով, որը մուլք-տասանորդի և բահրահնգորդի հետ նատուրալ պարհակի գումարը հասցնում էր բերքի 1/3-ին[13]։ Վ. Ռշտունին ինքն էլ է գրում, որ բահրաքյար (հետևաբար և բահրաքյար-մուլքադարական) գյուղացիների բնավճարը կազմում էր բերքի 1/3-ը[14]։ Բայց, որքան գիտենք, բնատուրքի այլ բաղկացուցիչ մասեր այս շրջանից հայտնի չեն։ Բերքի 1/30-ը (չիլյաքը), որ սովորաբար իբրև վարձատրություն վճարվում էր հարկահավաք-սարքյարներին, սարդարի կարգադրությամբ, ինչպես Ի. Շոպենն է նշում[15], երբեմն կարող էր թողնվել մուլքադարին, որի հասույթը դրանով կազմում էր բերքի 4/30-ը։ Նույնը կատարվել էր Պասկևիչի ժամանակ։ «Կալվածատիրական հողի վրա բնակվող շինականներից ստացված հարկը,— գրում էր նա 1829 թ. մարտի 19-ին Հայկական մարզի վարչությանը,— սարդարն ինքն էր հաշվում և տալիս էր կալվածատիրոջն հասանելիք մասը. պահպանելով այս կարգը, իմ կարգադրությամբ հողատերերին ավելացված է ևս հարկի մի մաս գանձարանից»[16]։ Համաձայնելով Վ. Ռշտունու այն պնդմանը,

---

11 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 2727, թ. 62։

12 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 72։

13 Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1959, էջ 355—378։

14 В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, стр. 46, 50.

15 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 1131—1136.

16 «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею» («Акты»), т. VII, Тифлис, 1878, стр. 494 (док. 448).

որ դա կազմում էր բերքի 1/30-ը[17], ավելացնենք, որ գյուղացու վաստակի այդ բաժինը գանձարանից տրվում էր մուլքադարներին՝ սարքյարների պաշտոնը այդ տարիներին «լրիվ ոչնչացնելու և նրանց փոխարեն գյուղերի բնակիչներից մեկնումեկին ընտրելու» կապակցությամբ[18]։ Հետագայում հարկային սիստեմի փոփոխությունների առթիվ, սարքյարների պաշտոնը մերթ վերականգնվում էր (1833 թ. հունիս), մերթ վերացվում (1835 թ.)[19], իսկ 1840 թ. «կառավարական հարկահավաքների վերացմամբ իրավունք տրվեց մուլքադարներին՝ շինականների հաշվին սարքյարներ պահելու»[20]։

Նշենք նաև, որ 1847 թ. ապրիլի 20-ի բեգական և դեկտեմբերի 28-ի աղալարական Կանոնադրությունները չէին կարող Երևանի նահանգի բնապարհակի 1/30-րդ «հավելումը սրբագործել», քանի որ չէին տարածվում այդ նահանգի վրա, իսկ այն նահանգներում, որոնց համար դրանք կազմված էին՝ մալշահաթը սահմանվում էր ոչ թե բերքի 4/30-ի, այլ 3/30-ի չափով՝ պահպանելով, սակայն, բանվորական օրերի պարհակը՝ հօգուտ հողատերերի։ Ինչ վերաբերում է Երևանի նահանգի համար կազմված 1851 թ. հունիսի 8-ի Կանոնադրությանը (որը չկենսագործվեց), ապա նա իրոք մալշահաթը սահմանում էր բերքի 4/30-ով, բայց չպահպանելով աշխատանքային պարհակի այն չափերը, որոնք նախատեսված էին 1847 թ. Կանոնադրություններով՝ հետագայում Բաքվի ու Գանձակի նահանգների և Թիֆլիսի նահանգի մի մասի մեջ մտած շրջանների բեգերի և աղալարների համար։ Բեգական Կանոնադրությամբ գյուղացիական յուրաքանչյուր ընտանիք իր գործիքներով և անասուններով տարեկան 18 բանվորական օր էր տրամադրելու հողատիրոջը (կամ մեկ օրվա փոխարեն 20 կ.), տարվա մեջ 2 օր էլ ամբողջ գյուղը պետք է «օգներ նրան տնտեսական աշխատանքներում» (էվրեզ)։ Մինչդեռ 1851 թ. Կանոնադրությունը Երևանի նահանգի հողատերերի օգտին սահմանում էր աշխատանքային պարհակներ՝ 1847 թ. աղալարական Կանոնադրությամբ նշված չափով, այն է՝ շինական ընտանիքից տարեկան 8 բանվորական օր (կամ՝ օրվա դիմաց 10 կ.)։ Իսկ էվրեզից օգտվում էին այն աղալարները միայն, որոնք գյուղերի կառավարիչներ էին։ Այլ աշխատանքների համար «ծառաներ» ստանալու հողատերերի իրավունքները երկու կանոնադրությամբ էլ նույնն էին[21]։

Ինչպես տեսնում ենք, Երևանի նահանգում աշխատանքային պարհակը փոքր էր մյուս նահանգների պարհակից ավելի քան կեսով, իսկ դրամավճար արտահայտությամբ՝ շուրջ 4,5 անգամ։ Տարբերությունն ավելի մեծ կլինի, եթե նկատի ունենանք, որ այստեղ էվրեզը նույնպես լայն կիրառում չէր ունենա, որքանով որ, ինչպես նշում են բոլոր հետազոտողները, մուլքադարները իբրև կանոն ոչ միայն գյուղեր չէին կառավարում, այլև (առանձին բացառու-

---

17 В. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., стр. 68.

18 «Акты», т. VII, стр. 501 (док. 454).

19 И. Бахтадзе, Податное обложение государственных крестьян Закавказского края. («Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края» («Свод материалов»), т. I, ч. III, Тифлис, 1887, стр. 74—75).

20 М. Кучаев, Поземельное устройство государственных крестьян, водворенных на владельческих землях в Закавказских губерниях («Свод материалов», т. I, ч. II, Тифлис, 1887, стр. 4—5).

21 *Հմմտ. Կանոնադրությունների համապատասխան կետերը* «Свод материалов», т. I, ч. II, Приложение, стр. 76—82.

թյուններով) սեփական տնտեսություններ էլ չէին վարում։ Այս փաստը նույնպես, Երևանի նահանգի բնապարտույթի 1/30-րդ «հավելման» մասին խոսելիս, հուշում է մոռացության չտալ, որ մյուս նահանգներում այն «փոխհատուցվում» էր բանվորական օրվա պարհակով։ Այդ երկուսի ճշգրիտ համարժեքությունը ցույց տվող կոնկրետ տվյալներ չկան, բայց, ըստ ամենայնի, այն ժամանակ ամենուրեք դրանք հավասարեցվում էին՝ ինչը և տեսանք Գեղամովին և Էջմիածնի վանքին վճարվող հարկաչափերի որոշման օրինակով։

1870 թ. Կանոնադրությունը իրոք սրբագործեց 1847—1851 թթ. Կանոնադրություններով հաստատված շինական պարտույթների գանձման ֆեոդալական հայտնի ձևերը՝ բնավճարը, աշխատավճարն ու դրամավճարը։ Բայց ճիշտ չէր լինի Երևանի նահանգի Կանոնադրությամբ հաստատված բնատուրքը անվերապահորեն ավելին համարել հարևան նահանգների նատուրալ պարհակից՝ առանց հաշվի առնելու, թե տարբեր նահանգներում շինականների ընդհանուր տուրքը ինչպե՞ս էր կոտորակվում և ի՞նչ միացությամբ վճարվում։

Ցարիզմի գաղութային քաղաքականության համար տվյալ դեպքում բնութագրականը ոչ թե արտոնության շնորհումն էր Երևանի նահանգի հողատերերին հարևան նահանգների կալվածատիրության նկատմամբ, որը թվացող է և անբացատրելի, այլ ընդհանրապես հասարակական արտադրությունից հեռու կանգնած այդ պորտաբույծներին վճարվող բերքահասույթի 1/30 հավելման պահպանումն ու օրինականացումը՝ մի դեպքում բնավճարի, մյուս դեպքում՝ դրան համարժեք բանվորական օրվա պարհակի կամ սրան փոխարինող դրամատուրքի ձևով։

НАТУРАЛЬНАЯ ПОДАТЬ ЧАСТНОВЛАДЕЛЬЧЕСКИХ КРЕСТЬЯН ЭРИВАНСКОЙ ГУБЕРНИИ ПО ПОЛОЖЕНИЮ 1870 г.

С. Х. АЛЕКСАНЯН

Резюме

Сопоставление соответствующих статей Положений от 20 апреля 1847 г., 28 декабря 1847 г., 8 июня 1851 г. и 14 мая 1870 г. и новые архивные данные позволяют считать необоснованным утверждение о том, будто Положением от 14 мая 1870 г. натуральная подать частновладельческих крестьян Эриванской губернии превысила размер подати в соседних губерниях на 1/30 часть (или на 33%) урожая, с одновременным обложением крестьян трудовой повинностью (которая могла заменяться денежной оплатой). Эта разница проявлялась только в форме выплаты, точнее — в разных сочетаниях и пропорциях отдельных частей общей земельной ренты. При попустительстве и покровительстве властей землевладельцы произвольно облагали крестьян оброчными статьями и разными повинностями в повышенных размерах.